ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

14 հոկտեմբերի 2021թ. թիվ 1430

Ա. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 124-րդ և 175-րդ հոդվածներով, 185-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ ԳՍ/19/26517-2021 և ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Լոռու մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավարի 2021 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 2584/հր գրությունները՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Արմեն Հակոբյանին ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Լոռու մարզի տարածքային ստորաբաժանման զորահավաքային աշխատանքներին մասնակցելու համար ս/թ հոկտեմբերի 15-ից 17-ը ազատել ծառայողական պարտականությունների կատարումից՝ պահպանելով նրա աշխատատեղը և միջին աշխատավարձը:

2. Մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնին՝ Ա.Հակոբյանի ամենամյա հերթական արձակուրդին ավելացնել երկու օր:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

14/10/2021

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 14
ք.Վանաձոր